ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o1448- Ա/2 «12» օգոստոսի 2022 թ.

«ԹՈՒՐՔԵՐԵՆ» ԱՌԱՐԿԱՅԻ 10-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի N 1144-Ն հրամանով հաստատված կարգի 11-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. «Թուրքերեն» առարկայի 10-րդ և 11-րդ դասարանների ծրագրերը որպես երրորդ օտար լեզվի (նաև խմբակի) ծրագրեր երաշխավորել գործածության՝ համաձայն հավելվածի:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
2022 թվականի օգոստոսի 12-ի
N 1448-Ա/2 հրամանի

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

10-ՐԴ ԵՎ 11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՆԵՐԻ (ՆԱԵՎ ԽՄԲԱԿԻ) ՀԱՄԱՐ /68 ժամ/

ՀԵՂԻՆԱԿՆԵՐ՝

Լենդրուշ Ղումաշյան, Նառա Վերանյան, Մարիամ Հարությունյան, Հասմիկ Սամվելյան, Ռոզա Հակոբյան, Մուշեղ Խուդավերդյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բացատրագիր……4
Թուրքերենի ուսուցման կազմակերպման ընհանուր մոտեցումներ……5
Թուրքերենի ուսուցման նպատակները……5
Թուրքերենի ուսուցման խնդիրները……6
Ակնկալվող վերջնարդյունքները……7
Բովանդակություն……8

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Թուրքերենի ուսուցման ծրագիրը նախատեսված է 10-րդ և 11-րդ դասարանների համար (տարեկան 68 ժամ, շաբաթական 2 ժամ), որը կարելի է կիրառել և՛ որպես առարկայական, և՛ որպես խմբակի ծրագիր: Քանի որ այն ուսումնական հաստատություններում ներդրվում է որպես նոր օտար լեզու և անծանոթ է սովորողներին, ուստի այս տրամաբանությամբ առաջնորդվելով՝ որպես երրորդ օտար լեզու և որպես խմբակի ծրագիր՝ հավասար ժամաքանակ է տրամադրվում:

Ուսումնական գործընթացը նպատակաուղղված է սովորողների մոտ կարդալու, լսելու, խոսելու, գրելու և հասկանալու կարողությունները զարգացնելուն: Ծրագրի շրջանակներում սովորողներն իրականացնելու են թարգմանություններ, գրավորներ, խոսքային աշխատանքներ ինչպես նաև ինքնուրույն, զույգային և խմբային աշխատանքներ, որոնք կօգնեն զարգացնելու իրենց լեզվական գիտելիքները:

Տարածաշրջանային լեզուներից թուրքերենի ուսուցումը հիմնականում հետապնդում է շփման, հաղորդակցման, ինքնակրթության կազմակերպման նպատակներ: Իբրև տարածաշրջանային լեզու՝ թուրքերենը կարող է մեծ պահանջարկ ունենալ պայմանավորված ապագայում սահմանների հնարավոր բացմամբ, երկխոսությունների, դիվանագիտական հարաբերությունների հաստատմամբ, փոխհարաբերությունների ամրապնդմամբ (առևտրատնտեսական, զբոսաշրջային և այլ ոլորտներ): Կարևոր քայլ է նաև հայկական մշակութային արժեքները տվյալ երկրում ճանաչելու և պահպանելու առումով:

Ինչպես նաև թուրքերենի ուսուցումը դպրոցում կարող է սովորողների համար ապագա մասնագիտության ընտրության գործում նախահիմք հանդիսանալ:

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

Լեզվական նյութը/ հնչյունաբանություն, բառապաշար, քերականություն, շարահյուսություն/ պարզեցված է, ընտրված են քերականական նյութի ամենաանհրաժեշտ և գործածական կառուցվածքները: Քերականական նյութը մատուցվում է հիմնականում խոսքային նմուշների և կառույցների գործնական կիրառման միջոցով /դերային խաղեր, երկխոսություններ, ՏՀՏ-ների կիրառում և այլն/:

Նշված դասագրքերը և աշխատանքային տետրերը ներառում են անհրաժեշտ լեզվական նյութ և խոսքային գործունեության տեսակների զարգացման առավել արդյունավետ վարժությունների համակարգ, ինչպես նաև CD-ներ, որոնք կնպաստեն խոսքային գործունեության տարբեր տեսակների զարգացմանը.

1. ունկնդրելու հմտությունը զարգացնող առաջադրանքներ,
2. հաղորդակցման կարողությունները զարգացնող առաջադրանքներ,
3. գրավոր խոսքը հասկանալու և գրավոր խոսք ստեղծելու կարողությունը զարգացնող առաջադրանքներ:

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Թուրքերենի ուսուցում, հաղորդակցման կարողությունների ու հմտությունների ձևավորում և զարգացում (անմիջական/միջնորդավորված, այսինքն՝ ընթերցանության միջոցով տեքստը հասկանալ և գրավոր խոսքին տիրապետել):

Սովորողների մոտ թուրքերենի իմացության A1 և A2 մակարդակների պահանջներին համապատասխան գիտելիքների ձևավորում:

Բովանդակային նպատակ

1. Ուսումնասիրվող լեզվի մշակույթի, պատմության, աշխարհագրության, իմացություն:
2. Հարևան երկրի հետ համագործակցային, կրթական կապերի հաստատում և թուրքալեզու գրականության ուսումնասիրում:

Մեթոդական նպատակ

1. բանավոր խոսքի ձևավորում և զարգացում,
2. գրավոր խոսքի ձևավորում և զարգացում,
3. ունկնդրելու, խոսքը լսելով հասկանալու կարողության զարգացում,
4. ընթերցանության՝ որպես խոսքային գործունեության տեսակի զարգացում,
5. ընթերցված նյութը վերլուծելու կարողության զարգացում,
6. տարբեր թեմաներով զրույցներ անցկացնելու, երկխոսություններ կառուցելու միջոցով սովորողների բանավոր խոսքի զարգացում:

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Սովորել հարևան երկրի՝ Թուրքիայի պետական լեզուն՝ թուրքերենը:
2. Ծանոթանալ թուրքական լեզվի պատմությանը, դրա անցած ուղուն, բարեփոխումներին և դրանում ազգությամբ հայ գործիչների, այդ թվում՝ Հակոբ Մարթայանի ունեցած դերակատարմանը:
3. Հարստացնել սովորողի բառապաշարը:
4. Աշխատանք տանել լեզվական տարբեր կաղապարների շուրջ:
5. Կազմակերպել երկխոսություններ ծանոթ և անծանոթ իրավիճակներում, իրականացնել հնարավոր հաղորդակցում լեզվակիրների հետ:
6. Հաստատել միջմշակութային կապեր (տեսակամուրջ, որը կապահովվի համացանցի միջոցով):

Այս խնդիրների իրականացման միջոցով նպատակին և վերջնարդյունքներին հասնելու համար ավագ դպրոցի թուրքերենի ծրագրում ընդգրկված է թուրքերենի ողջ քերականությունն իր օրինաչափություններով ու բացառություններով:

Թուրքերենի 10-րդ և 11-րդ դասարանների ծրագրերը նախատեսված են տարեկան 68 ժամի համար, իսկ առանձին թեմաներին հատկացված ժամաքանակը կողմնորոշիչ բնույթ ունի, այսինքն՝ պարտադիր չէ տվյալ դասարանում դասավանդող ուսուցչի համար: Ուսուցիչը կարող է թեմաների բաշխման ժամաքանակը տնօրինել իր հայեցողությամբ:

ԱԿՆԿԱԼՎՈՂ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

10-րդ և 11-րդ դասարաններում սովորողները թուրքերենն ուսումնասիրելիս պետք է կարողանան՝

1. տարբերել տառերը, տառակապակցությունները, բառերը, նախադասությունները,
2. ճիշտ արտասանել թուրքերենի հնչյունները, հնչյունակապակցություն-ները, պահպանել բառերի և նախադասությունների շեշտադրումն ու հնչերանգը,
3. կիրառել պարզ խոսքային արտահայտություններ,
4. կիրառել թուրքերենով հաղորդակցման համար անհրաժեշտ լեզվական և խոսքային կարողություններ,
5. լսելով հասկանալ 1-2 րոպե տևողությամբ տեքստեր /կենդանի խոսքով և ձայնագրությամբ/,
6. որոշակի իրադրության մեջ փոխանակել 10-15 նախադասություն,
7. առանց նախնական պատրաստվածության հաղորդակցվել մեկ կամ մի քանի զրուցակիցների հետ,
8. բնութագրել/նկարագրել իրեն, ընկերոջը, առօրյան, կարծիք հայտնել այս կամ այն երևույթի մասին, հիմնավորել իր կարծիքը (3-7 նախադասության սահմաններում),
9. կարդալ անծանոթ բառերով տեքստեր մոտ 300 բառի սահմանում՝ պահպանելով ճիշտ առոգանությունը,
10. ապահովել լեզվական գիտելիքների A1 և A2 մակարդակների պահանջներին համապատասխան գիտելիքներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թուրքերենի դասընթացի լեզվական բաղադրիչներն են՝

1. հնչյունաբանություն,
2. բառագիտություն,
3. ձևաբանություն,
4. շարահյուսություն:

1. **Հնչյունաբանություն** (Ses Bilgisi)

Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ, բաղաձայնների խլացման և ձայնեղացման օրենքների յուրացում, բաղաձայնի սղում, բաղաձայնի ավելացում, բաղաձայնի փոփոխություն: Ձայնավորների ներդաշնակության կանոն, շեշտ (Vurgu):

2. **Ձևաբանություն** (Biçim Bilgisi)

Խոսքի մասեր, դասակարգումը (Sözcük Türleri, siniflandirilmasi):

2.1. **Գոյականներ** (İsimler/Adlar)

Գոյականի առանձնահատկությունները: Հատուկ և հասարակ գոյականներ: Կոնկրետ և վերացական գոյականներ:Հավաքական գոյականներ: Գոյականի թիվը: Գոյականի կապակցման ձևերը (İsim Tamlamalari). որոշյալ կապակցություն (Belirtili Ad Tamlamasi), անորոշ կապակցություն (Belirtisiz Ad Tamlamasi), անվերջածանց կապակցություն (Takisiz Ad Tamlamasi), շղթայական կապակցություն (Zincirleme Ad Tamlamasi): Գոյականի հոլովները (İsmin Hâlleri):

2.2. **Դերանուններ** (Zamirler/ Adillar)

Դերանունների տեսակները, դասակարգումը: Դերանունների հոլովումը:

2.3. **Ածական (**Sifatlar**)**

Ածականի համեմատության աստիճանները (Sifatlarin Derecelendirmesi): Ածականների կառուցվածքը (Sifatlarin Yapisi): Ածականների կիրառությունը:

2.4. **Մակբայներ** (Zarflar / Belirteçler)

Մակբայների տեսակները. ձևի մակբայներ, ժամանակի մակբայներ, տեղի մակբայներ, չափ ու քանակի մակբայներ, հարցական մակբայներ: Մակբայների կառուցվածքը (Zarflarin Yapisi):

2.5.**Բայ** (Fiil)

Բայի ժամանակները, խոնարհման ձևերը, անկանոնությունը, կառուցվածքը: Դերբայ:

2.6.**Հետադրություններ** (Edatlar/İlgeçler)

Առանձնահատկությունները, կիրառությունը:

2.7.**Շաղկապներ** (Bağlaçlar)

Առանձնահատկությունները, կիրառությունը:

2.8.**Ձայնարկություններ** (Ünlemler)

Առանձնահատկությունները, կիրառությունը:

3.**Շարահյուսություն** (Cümle Öğeleri)

Նախադասություն: Նախադասության հիմնական (ենթակա, ստորոգյալ) և երկրորդական (խնդիր, լրացում) անդամները: Նախադասությունների կառուցվածքային տիպերը և կապը միմյանց հետ:

Թուրքերենում կարևորագույն պայման՝ ենթակայի և ստորոգյալի տեղը նախադասության մեջ: Նշված պայմանը չպահպանելու դեպքում ճիշտ նախադասություն չի ստացվի:

Թուրքերենի ուսուցման համար ուսումնական գրականության և այլ ռեսուրսների ցանկ

1. Թուրքերենի դասագիրք, հեղինակությամբ՝ Ալեքսանդր Սաֆարյանի, Աշոտ Սողոմոնյանի, Տիրան Լոքմագյոզյանի, հրատ. Երևան «Լուսակն», 2011թ.:
2. Yeni HiTiT դասագրքերի և աշխատանքային տետրերի շարք, հրատ. Ankara Üniversitesi TÖMER, 2019 թ. :
3. Грамматика турецкого языка, Сэрап Озмен Кальмуцкая, հրատ. Delta Kültür Yayinevi, 2019թ.:

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԾՐԱԳԻՐ

10-րդ դասարան

(Շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68)

Դասագիրք՝ Թուրքերենի դասագիրք

(հեղինակներ՝ Ա. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագյոզյան,

հրատ. Երևան «Լուսակն», 2011թ.)

1. **Թուրքերենի այբուբենը** /1 ժամ/
   1) Ձայնավոր և բաղաձայն հնչյուններ
2. **Առաջին թեմա** /3 ժամ/
   1) Ցուցական դերանուններ
   2) Պարզ համառոտ նախադասություն
   3) Ստորոգման ածանցներ
   4) Հարցական դերանուններ
   5) Ներկա ժամանակով դրված ստորոգյալով պարզ նախադասության ժխտական և հարցական ձևեր
3. **Երկրորդ թեմա** /9 ժամ/
   1) Անձնական և ստացական դերանուններ
   2) Ներգոյական (տեղի) հոլով, հոգնակի թիվ
   3) Var և yok անունները
   4) Պատկանելության ածանցներ
4. **Երրորդ թեմա** /4 ժամ/
   1) Անվանական ստորոգյալի կազմությունը, ժխտական, հարցական, հարցական-ժխտական ձևերը
   2) Ածական անուն
   3) Ներգոյական հոլովով դրված գոյականը կրում է անվանական ստորոգյալի ստորոգման ածանցը
5. **Չորրորդ թեմա** /9 ժամ/
   1) Հրամայական եղանակ
   2) Բայի անորոշ ձև

3) Ներկա-շարունակական ժամանակաձև
4) Տրական հոլով, բացառական հոլով
5) Դասական թվականներ
6) Բառակազմական ածանցներ
7) Պատմողական բնույթի նախադասության բառերի շարադասություն

6. **Հինգերորդ թեմա** /4 ժամ/
   1) Ցուցական դերանունների հոլովում
   2) Հայցական հոլով
   3) Թերի օժանդակ բայի անցյալ կատարյալ ժամանակաձևի միջոցով կազմվող անվանական ստորոգյալ
   4) -ile- հետադրություն
   5) Բառավերջի խուլ բաղաձայնի հնչյունափոխություն
7. **Վեցերորդ թեմա** /6 ժամ/
   1) Գոյականների կապակցության առաջին ձև
   2) Ներգոյական հոլովով դրված անվանական ստորոգյալն անցյալ ժամանակում
   3) Անցյալ կատարյալ ժամանակաձև
   4) Հետադրություններ
   5) Ձայնավոր հնչյունների սղվելը
   6) Գոյականներին ածանցների կցման հերթականությունը
8. **Յոթերորդ թեմա** /6 ժամ/
   1) Գոյականի հոլովման աղյուսակներ
   2) Անձնական և ցուցական դերանունների հոլովումներ
   3) Պատկանելության ածանց ունեցող գոյականների հոլովումներ
   4) Ածականների համեմատական և գերադրական աստիճանների արտահայտում
   5) Հետադրությունների կիրառումներ
   6) Ժամանակի որոշումն ըստ ժամերի և րոպեների
9. **Ութերորդ թեմա** /8 ժամ/
   1) Ապառնի ժամանակ

2) Գոյականի կապակցություններ, բայ, մակբայ

3) Նպատակի պարագա

4) Բառակազմական վերջածանցներ

5) -ki- ստորադասական շաղկապ

6) Բառերի շարադասությունը նախադասության մեջ

10. Իններորդ թեմա /4 ժամ/

1) Ընդարձակ ներկա ժամանակ, հարցական, ժխտական և հարցական-ժխտական ձևեր

11. Թեմատիկ գրավոր աշխատանք /4 ժամ/

12. Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք /4 ժամ/

13. Գործնական աշխատանք /2 ժամ/

14. Կրկնություն /4 ժամ/

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԾՐԱԳԻՐ

11-րդ դասարան

(Շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68)

Դասագիրք՝ Թուրքերենի դասագիրք

(հեղինակներ՝ Ա. Սաֆարյան, Ա. Սողոմոնյան, Տ. Լոքմագյոզյան,

հրատ. Երևան «Լուսակն», 2011թ.)

1. **Իններորդ թեմա** /7 ժամ/
   2) Ըղձական եղանակ
   3) Ենթակայական դերբայ, մակբայական դերբայներ
   4) Հետադրություններ, գոյական անուն
2. **Տասներորդ թեմա** /7 ժամ/
   1) Բայի սեռը, բայի ըղձական խոնարհում
   2) Պայմանական եղանակի ցուցիչով կազմված բաղադրյալ ժամանակաձևեր
   3) Հետադրություններ, բառակազմական վերջածանցներ
3. **Տասնմեկերորդ թեմա** /9 ժամ/
   1) Վաղակատար անցյալ
   2) Անորոշ անցյալ
   3) Բառակազմական ածանցներ
   4) Բաշխական թվականներ, կոտորակային թվականներ
   5) Կապական գոյականների կիրառությունը
   6) Վերջածանցներում ձայնավորների փափկացում, բառավերջի կրկնակի բաղաձայնների վերականգնում
4. **Տասներկուերորդ թեմա** /9 ժամ/
   1) Անկատար անցյալ
   2) Մակբայական դերբայներ
   3) Ընդարձակ ներկա ժամանակի ձևերի կիրառում
   4) Թվական անունների առարկայացում
   5) Ուղղակի խոսք, kendi բառը

5. **Տասներեքերորդ թեմա** /10 ժամ/
   1) Ածանցներով կազմվող գործողության անունները
   2) Կարելիության և անկարելիության ձևերը
   3) Հետադրություններ
   4) Ken մակբայական դերբայի ածանցը
   5) Անցյալ ժամանակի դերբայ
6. **Տասնչորսերորդ թեմա** /5 ժամ/
   1) Ներգոյական հոլովով դրված գործողության անվան միջոցով կազմված ստորոգյալը
   2) Հարկադրական եղանակ
   3) Ածանցներով կազմվող մակբայական դերբայներ
   4) Տրոհական հարաբերություն
   5) Բառակազմական ածանցներ
7. **Տասնհինգերորդ թեմա** /7 ժամ/
   1) Անորոշ իմպերեֆեկտ
   2) Բաղադրյալ բայեր
   3) Ապառնի անցյալ ժամանակ
   4) Անորոշ անցյալ ժամանակով կազմվող պատմողական բաղադրյալ ժամանակաձև
   5) Ըղձական եղանակի անցյալ ժամանակաձև
   6) Բաղադրյալ պայմանական ժամանակաձևեր
8. **Թեմատիկ գրավոր աշխատանք** /4 ժամ/
9. **Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք** /4 ժամ/
10. **Գործնական աշխատանք** /2 ժամ/
11. **Կրկնություն** /4 ժամ/

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

10-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

(Շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68)

Թեմատիկ գրավոր աշխատանք՝ 4 ժամ

Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

Կրկնություն՝ 4 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄ
1	Թուրքերենի այբուբեն	1
	ԱՌԱՋԻՆ ԹԵՄԱ	**3 ժամ**
2	Ցուցական դերանուններ, պարզ համառոտ նախադասություն, ստորոգման ածանցների առաջին բաղաձայնի խլացումը,(d-t հնչյունափոխությունը)	1
3	Հարցական դերանուններ(Ne?, kim?)	1
4	Ներկա ժամանակով դրված ստորոգյալով պարզ նախադասության ժխտական և հարցական ձևերը	1
	ԵՐԿՐՈՐԴ ԹԵՄԱ	**9 ժամ**
5-6	Անձնական դերանուններ	2
7	Ներգոյական (տեղի) հոլով	1
8	Հոգնակի թիվ, var և yok անունները	1
9	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	
10-11	Ստացական դերանուններ	2
12-14	Պատկանելության ածանցներ	3
15	*Կրկնություն*	
16	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	
	ԵՐՐՈՐԴ ԹԵՄԱ	**4**

		ժամ
17	Անվանական ստորոգյալի կազմությունը	1
18	Անվանական ստորոգյալի ժխտական, հարցական, հարցական-ժխտական ձևերը,	1
19	Աճական անուն	1
20	Ներգոյական հոլովով դրված գոյականը կրում է անվանական ստորոգյալի ստորոգման ածանցը	1
ՉՈՐՐՈՐԴ ԹԵՄԱ		**9 ժամ**
21	Հրամայական եղանակ	1
22	Բայի անորոշ ձևը	1
23-24	Ներկա-շարունակական ժամանակաձև	2
25	Տրական հոլով	1
26	Բացառական հոլով	1
27	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	
28	Դասական թվականներ	1
29	-li, leyin- բառակազմական ածանցներ	1
30	Պատմողական բնույթի նախադասության բառերի շարադասությունը	1
31	*Գործնական գրավոր և բանավոր աշխատանք*	
32	*Կրկնություն*	
33	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**4 ժամ**
34	Ցուցական դերանունների հոլովումը: Թերի օժանդակ բայի անցյալ կատարյալ ժամանակաձևի միջոցով կազմվող անվանական ստորոգյալը	1
35	Հայցական հոլով	1
36	-ile- հետադրությունը	1
37	Բառավերջի խուլ բաղաձայնի հնչյունափոխությունը	1

ՎԵՑԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**6 ժամ**
38	Գոյականների կապակցության առաջին ձև	1
39	Ներգոյական հոլովով դրված անվանական ստորոգյալն անցյալ ժամանակում	1
40	Անցյալ կատարյալ ժամանակաձև	1
41	Հետադրություններ	1
42	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	
43	Ձայնավոր հնչյունների սղվելը	1
44	Գոյականներին ածանցների կցման հերթականությունը	1
45	*Կրկնություն*	
46	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	
ՅՈԹԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**6 ժամ**
47	Գոյականի հոլովման աղյուսակներ	1
48	Անձնական և ցուցական դերանունների հոլովման աղյուսակներ	1
49	Պատկանելության ածանց ունեցող գոյականների հոլովման աղյուսակներ	1
50	Ածականների համեմատական և գերադրական աստիճանների արտահայտումը	1
51	-kadar, dek, gibi- հետադրությունների կիրառումներ	1
52	Ժամանակի որոշումն ըստ ժամերի և րոպեների	1
53	*Գործնական գրավոր և բանավոր աշխատանք*	
ՈՒԹԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**8 ժամ**
54	Ապառնի ժամանակ	1
55	Գոյականի կապակցություններ	1
56	Բայ	1

57	Մակբայ	1
58	Նպատակի պարագա	1
59	Բառակազմական վերջածանցներ	1
60	-ki- ստորադասական շաղկապը, -ki- վերջածանցը	1
61	Բառերի շարադասությունը նախադասության մեջ	1
62	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	
63	*Կրկնություն*	
64	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	
ԻՆՆԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**4 ժամ**
65-66	Ընդարձակ ներկա ժամանակ	2
67-68	Ընդարձակ ներկայի հարցական, ժխտական և հարցաժխտական ձևերը	2

ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

11-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

(Շաբաթական 2 դասաժամ, տարեկան՝ 68)

Թեմատիկ գրավոր աշխատանք՝ 4 ժամ

Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք՝ 4 ժամ

Գործնական աշխատանք՝ 2 ժամ

Կրկնություն՝ 4 ժամ

Հ/Հ	ԹԵՄԱ	ԺԱՄ
	ԻՆՆԵՐՈՐԴ ԹԵՄԱ	**7 ժամ**
1	Ըղձական եղանակ	1
2	Ենթակայական դերբայ	1
3	Մակբայական դերբայներ	1
4	Թերի օժանդակ բայից կազմված –iken մակբայական դերբայը	1
5	-başka, için- հետադրություններ	1
6	-ara, uğur, üst, alt, yan, karşi, doğru- անունների կապական կիրառությունը	1
7	Որոշիչների շարադասությունը	1
8	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	
	ՏԱՍՆԵՐՈՐԴ ԹԵՄԱ	**7 ժամ**
9-10	Բայի սեռը	2
11	Բայի ըղձական խոնարհում	1
12-13	Պայմանական եղանակի ցուցիչով կազմված բաղադրյալ ժամանակաձևեր	2
14	-beri, dolayi, itibaren, fazla- հետադրությունները	1
15	Բառակազմական վերջածանցներ	1
16	*Կրկնություն*	

17	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	
ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**9 ժամ**
18	miş- ով անվանական ստորոգյալը	1
19	Անորոշ անցյալ	1
20-21	-al, at, iyet, ca, lan, laş բառակազմական ածանցները	2
22	Բաշխական թվականներ	1
23	Կոտորակային թվականներ	1
24	*Գործնական գրավոր և բանավոր աշխատանք*	
25	-ön, arka, iç, diş, hak- անունների կապական կիրառությունը	1
26	Վերջածանցներում ձայնավորների փափկացումը	1
27	Բառավերջի կրկնակի բաղաձայնների վերականգնումը	1
28	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	
29	*Կրկնություն*	
30	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	
ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**9 ժամ**
31	Անկատար-անցյալ ժամանակաձև	1
32-33	-arak -ով մակբայական դերբայներ	2
34-35	Ընդարձակ ներկա ժամանակի հաստատական և ժխտական ձևերի կիրառում	2
36	Ուղղակի խոսք	1
37	Թվականի առարկայացում	1
38	-Kendi- բառը	1
39	-Madan(meden)-ով մակբայական դերբայը	1
40	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**10 ժամ**
41-42	-dik, acak -ով գործողության անունները	2
43-44	Կարելիության և անկարելիության ձևերը	2
45	-rağmen, doğru, göre, karşi - հետադրությունները	1
46-47	-zarf, üzer(i) -բառերի կապական կիրառությունը	2
48	*Կրկնություն*	
49	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	
50	-ken- մակբայական դերբայի ածանցը	1
51	Անցյալ ժամանակի դերբայ	1
52	Թուրքերենը՝ կցական լեզու	1
ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**5 ժամ**
53	Ներգոյական հոլովով դրված գործողության անվան միջոցով կազմված ստորոգյալը	1
54	Հարկադրական եղանակ	1
55	-dikça, ali- ով ածանցներով կազմվող մակբայական դերբայներ	1
56	Տրոհական հարաբերություն	1
57	-daş(deş), sal(sel)-բառակազմական ածանցներ	1
58	*Գործնական գրավոր և բանավոր աշխատանք*	
ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ ԹԵՄԱ		**7 ժամ**
59	Անորոշ իմպերեֆեկտ	1
60	Բաղադրյալ բայեր	1
61	Ապառնի-անցյալ ժամանակ	1
62	*Ուսուցողական գրավոր և բանավոր աշխատանք*	
63	Անորոշ անցյալ ժամանակով կազմվող պատմողական բաղադրյալ	1

	ժամանակաձև	
64	Ըղձական եղանակի անցյալ ժամանակաձև	1
65	Բաղադրյալ պայմանական ժամանակաձևեր	1
66	Սուբյեկտիվ եղանակավորություն	1
67	*Կրկնություն*	
68	*Թեմատիկ գրավոր և բանավոր աշխատանք*	